

պետութեան կենտրոնը Նինուէից տեղափոխուեց Խառան, այնուհետեւ՝ Կարքեմիշ, պատճառ դարձաւ, որ պարսիկները որպէս Անդրգետքի հոմանիշ գործածեն Ասսիրիան⁷⁴:

Մասնագիտական գրականութեան մէջ սովորաբար Հերոդոտոսի V սատրապութեան ստեղծումը կապում են Քսերքսէսի կողմից Ք. ա. 482 թ. Բաբելոնի աստամբուլները ճնշելու ժամանակի հետ⁷⁵, ինչը հնարաւոր է:

Այսպիսով, կատարուած քննութիւնը ցոյց է տալիս, որ Հին պարսկական սեպագիր արձանագրութիւնների Աթուրան ընդգրկում էր Անդրգետքը եւ Ասորեստանը, ընդ որում՝ անտիկ աղբիւրների Սիրիան նոյնպէս համապատասխանում էր Անդրգետքին եւ առանձին ղէպքերում նաեւ Ասորեստանին: Այս ընդարձակ ու հարուստ սատրապութիւնը Աքեմենեան տէրութեան համար ունէր չափազանց կարեւոր ռազմաքաղաքական եւ տնտեսական նշանակութիւն:

74 A. F. Rainey, *The Satrapy "Beyond the River"*, p. 55; M. A. Дандамаев, *Ахеменидская империя*, с. 148.
75 A. T. Olmstead, *History of the Persian Empire*, Chicago, 1960, p. 237; A. F. Rainey, *The Satrapy "Beyond the River"*, p. 57; M. Dandamaev, *Achaemenid Mesopotamia: Traditions and Innovations*, - "Achaemenid History", VIII, Continuity and Change, Leiden, 1994, p. 229.

ՓԱԻՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՎԿԱՅՈՒԱԾ ԻՐԱՆԱԿԱՆ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ՄԻ ՔԱՆԻ ԲԱՌԵՐԻ ՇՈՒՐՋ

Լաւրենտի Յովհաննիսեան

Ե. դ. Հայ մատենագրութեան մէջ վկայուած են իրանական լեզուներից, յատկապէս՝ պարթեւերէնից եւ միջին պարսկերէնից կատարուած բազմաթիւ փոխառութիւններ: Դրանց մեծագոյն մասը հարիւրամեակներ շարունակ գործածուել է բանաւոր, գրերի գիւտից յետոյ՝ նաեւ գրաւոր լեզուում: Ժամանակի ընթացքում դրանք գիտակցուել են որպէս հայերէն բառեր եւ փոխառեալ արմատներով կազմել են բազմաթիւ նոր կազմութիւններ, որոնք գործածական են նաեւ այժմ:

Բուզանդի Պատմութեան¹ մէջ կան նաեւ իրանական ծագում ունեցող մի շարք բառեր, որոնք Հինգերորդդարեան եզակի կամ միակ վկայութիւններն են: Որոշ դիտարկումներով անդրադառնանք այդ կարգի միաւորներին.

ա) Նոր հայկազեան բառարանում չվկայուած բառեր.

Աշխարասանդ «թագաւորական թագի կապը», զինդկապետ «պարսկական զօրապետական մի աստիճան», հազարաւոյստ «պարսկական մի տիտղոս», սորակալ «ախոռապետ», տապարիկ/տապրիկ:

ՆՀԲ-ն հազարաւոյստ-ն ըստ երեւոյթին դիտել է որպէս յատուկ անուն, այդ պատճառով էլ այն չի բառարանագրուել: Սորակալ-ը Աճառեանն ուղղում է ստորակալ, պհլ. stōr «ձի» բառով կազմութիւն, իսկ տապրիկ-ը համարում է յատուկ անուն:

Տապրիկ-ը նոյնպէս զօրատեսակի անունում պէտք է համարել՝ իրան. *tabar «կացին» բառով կազմութիւն, որն առկայանում է եւ ՆՀԲ-ում վկայուած տապարաւոր բառում:

բ) Բառեր, որոնք ՆՀԲ-ն վկայակոչում է Ռիայն Բուզանդին.

Աշխարան - «Իսկ կինն սպանելոյն Փառանձեմն զհանդերձան պատառեալ, զգէսս արձակեալ, մերկատիտ ի մէջ աշխարանին կոծէր» (IV, ԺԷ):

Ստ. Մալխասեանը աշխարան-ը թարգմանել է «սգատեղի». «...վարսերը արձակած, կուրծքը բաց, կոծում էր սգատեղում»:

Բառի արմատն է աշխար «ողբ, լաց»: Գրաբարում վկայուած են նաեւ այդ արմատով կազմուած մի շարք բառեր՝ աշխարական, աշխարահեծ, աշխարանուագ, աշխարանք, աշխարապէս, աշխարաւոր, աշխարեմ (տե՛ս ՆՀԲ):

Արմ-ում աշխար-ը չստուգաբանուած բառերի շարքում է: Է. Բենուենիստը այն համարում է իրանական փոխառութիւն՝ պրթ., միջ. պրս. axšād «ողբ, լացուկոծ»: Այդ ստուգաբանութիւնն ընդունում է նաեւ Գ. Զահուկեանը²:

Կարծում ենք՝ ի մէջ աշխարանին բառակապակցութիւնը կարելի է թարգմանել «սգացողների մէջ» կամ «սգացողների մէջտեղը»: Աշխարան-ի անձեւոյթը այս ղէպքում կարող է լինել իրան. an- յոգնակերտը:

¹ Փառլոտսի Բիւզանդացոյ Պատմութիւն Հայոց, բնագիրը՝ Բ. Պատկանեանի, թարգմանութիւնը եւ ծանօթագրութիւնները՝ Ստ. Մալխասեանցի, Երեւան, 1987:

² Գ. Զահուկեան, Հայերէն ստուգաբանական բառարան, Երեւան, 2010, էջ 64:

Աշխարհ-ի տարածական իմաստով գործածութեան դէպքում սպասելի էր Աշխարհի ձեւը:

Աշխարհը դնել բառակապակցութեան՝ ՆՀԲ-ի վկայած երկու օրինակներն էլ դարձեալ Բուզանդի Պատմութիւնն է:

Բաշխիշ - ըստ ՆՀԲ-ի՝ «պարզեւ, կամ մասն եւ բաժին ի բարեաց»: Բառարանը որպէս եղակի վկայութիւն բերում է Բուզանդի Պատմութեան հետեւեալ նախադասութիւնը. «Սոյնպէս եւ ամենայն զօրացն տային բաշխիշ ի մեծամեծ աւարացն ածելոցն» (V, Բ): Բնագրում բառն ուղղուած է բաշխի՝ նկատի ունենալով Նորայր Բիւզանդացու այն դիտարկումը, որ «Փաւստոսի լեզուում այսպիսի նոր ռամկաբանութիւն անընդունելի է» (էջ 439, ծան. 166): Ուղղումը, թերեւս, մերժելի է: Միջին իրանական լեզուներում վկայուած է baxšišn «պարզեւ»³:

Բառի արմատը իրան. *baγ, baǰ տարբերակն է՝ «բաժանել, պարզեւատրել, նուիրել» իմաստով⁴:

Ժանուար - բառը Բուզանդի գրքում ժանու ձեւով է. «Եւ քանզի կին նորա եկեալ էր ընդ նմա ժանուաւ, ի նմին ի նորին վաշտու էր ընդ առն իւրում» (IV, Ժէ): ՆՀԲ-ն ժանու-ն մեկնում է «գահաւորակ կամ կառք ուղևոյ բարձեալ ի ջորեաց, յերկարաց, կամ ի փղաց»:

Հ. Աճառեանը ճիշտ է համարում ոչ թէ ժանու, այլ՝ ժանուար ձեւը՝ նշելով, որ թէեւ «պճլ. žanvar աւանդուած էէ, բայց կայ պրս. žanbar» «մի տեսակ պատգարակ» (տե՛ս Արմ, Ժանուար բառայօդուածը):

Բառի իրանական բնոյթը կասկած չի յարուցում: Ուշադրութեան արժանի է բառի ստուգաբանութիւնը: Բառարմատը ի-

րան. janī «կին»-ն է, որն, ըստ Բէյլիի, առկայ է նաեւ հայերէնում վկայուած Ջնիկան մայակտ կապակցութեան մէջ, «որը արքայական հարեմի հսկիչն էր»⁵:

Այս ստուգաբանութեամբ ճշգրտուած է նաեւ ժանուար-ի նրբիմաստը, այն է՝ ոչ թէ «գահաւորակ, պատգարակ» ընդհանրապէս, այլ՝ «կանանց համար պատրաստուած պատգարակ»: Այդ է հաստատում նաեւ շատ աւելի ուշ շրջանից վկայուած հետեւեալ նախադասութիւնը. «Իսկ տաճիկքն կայեալ զերանելի կոյսն... տարեալ մուծին ի ժանուարն» (ընդգծումները մերն են - Լ. Յ.)⁶:

Ծեմիշ - «Եթէ յորժամ գիտիցես թէ քաջ արբեալ իցէ եւ դմտօք դառանցեալ յարբեցութենէ սպարապետն Մուշեղ, ես յարուցեալ իբրեւ ի ճեմիշն երթալոյ պատճառաւ, եւ դուք պատեսջիք զնովաւ» (V, Լէ): ՆՀԲ-ն Ծեմիշ-ը մեկնում է «որ է աղբիւր, եւ տեղի թափելոյ զաւելորդս բնութեան»: Հ. Աճառեանը, ընդունելով «արտաքնոց» իմաստը, ենթադրում է «պահլաւական անյայտ մի ձեւ» (տե՛ս Արմ, Ծեմիշ բառայօդուածը):

Ծեմիշ բառը գործածական էր եւ միջին պարսկերէնում: Այս փաստը ծանօթ էէ եղել բառարանագիրներին: Միջին պարսկերէնում վկայուած է čamišn «արտաքնոց, միղելը» (տե՛ս Mackenzie, 21): Գրաբարեան ճիշտ ձեւն էլ պէտք է համարել Ծեմիշն եւ ոչ թէ՝ Ծեմիշ:

Ծերմակ - Արդի հայերէնում գունանուն է եւ գործածական է արեւմտահայերէնում. արեւելահայերէնում առաւել գործածական է սպիտակ հոմանիշը: Ծերմակ-ը եւ այդ արմատով կազմութիւնները նոյն համատեքստում են եւ վերաբերում են Մուշեղ սպարապետի ձիուն: Մուշեղը, գե-

3 Տե՛ս Արմ, Բաշխիշ բառայօդուածը, նաեւ՝ D. N. Mackenzie, A concise Pahlavi dictionary, London, p. 17:
4 Этимологический словарь иранских языков, т. 2, М., 2003, стр. 45.

5 Transactions of the Philological Society, 1956, p. 111-112.
6 Ջաքարեայ Սարկաւագի Պատմագրութիւն, Վաղարշապատ, 1870, էջ 128:

րեկաբելով Շապուհի հարեմը, մեծահոգաբար հետ է վերադարձնում կանանց, եւ «ժանաւարս տայր նոցա կաղմել ամենեցուն, եւ հանեալ արձակէր զամենեան...» (V, Բ). (միջանկեալ նշենք, որ այս հաստուածն էլ հաստատում է ժանուար-ի «կանանց պատգարակ» իմաստը):

Մէջբերուած հաստուածի շարունակութեան մէջ Բուզանդը գրում է. «Եւ էր ի ժամանակին յայնմիկ երկվարն Մուշեղի ճերմակ ձի մի, իսկ թագաւորն Պարսից Շապուհ յորժամ առնոյր գինի ի մատունսն ըմպել ... ասէր. ձերմակաձին գինի արբցէ: Եւ ետ նկարել զտաշտ ի պատկեր զՄուշեղ ճերմակաւն, եւ ի ժամ ուրախութեանն ... ասելով թէ ճերմակաձին գինի արբցէ»:

Ակնյայտ է, որ ճերմակ բառը վերաբերում է ձիուն, անորոշ է բառի «սպիտակ» իմաստը, որը ստուգաբանօրէն էլ չի հիմնաւորում: Աճառեանը ենթադրում է պճլ. čermak ձեւը, «որը թէեւ աւանդուած էէ, բայց հմմտ. պրս. čarma «ճերմակ ձի, շագանակագոյն կարմիր ձի, «հասրակօրէն ձի...» (ընդգծումը մերն է - Լ. Յ.):

Ծերմակ-ը ձիու տեսակ է: Ե. դարում այն որպէս գունանունն չի գործածուել⁷:

Շաւակի - «Եւ հրաման տայր հոյանել զամենայն ազատ կանանին, եւ նստուցանել աստի անտի ասպարիսին, եւ ինքն Շապուհ արքայ հեծեալ ի ձի, շաւակի անցաւէր առ կանանովն. եւ որ յակն գային, մի

7 Հայերէնի հիմնական գունանունները՝ սպիտակ, ճերմակ, սեւ, կարմիր, կապոյտ, համարում են իրանական փոխառութիւններ: Մենք այն կարծիքին ենք, որ դրանք նախապէս գունանուններ չեն եղել: Ենթադրում ենք, որ հայերէնի՝ իրանական լեզուներից փոխառուած բոլոր գունանունները սկզբնապէս վերաբերել են կոնկրետ առարկայի: (այդ մասին մանրամասն տե՛ս Լ. Յովհաննիսեան, Հայերէնի իրանական փոխառութիւնները, Երևան, 1990, էջ 108-114), նոյնի՝ Ինչո՞ւ եւ ինչպէ՞ս են փոխառուել իրանական գունանունները («Գիտական գիթերի ժողովածոյ, Վանաձոր-Երևան, 2001, էջ 40-44):

մի ի նոցանէ պղծեալ ի խառնակութիւն տանէր առ ինքն» (IV, ԾԸ). (ընդգծումը մերն է - Լ. Յ.):

ՆՀԲ-ում բառի միակ վկայութիւնն է՝ հետեւեալ բացատրութեամբ. «Բառ անյայտ, իբր Արշաւակի եւ կամ որպէս այլազգ «փառք կամ ցոփութիւն»: Նոյն բառարանը արշաւակի-ն մեկնում է «արշաւելով, յարշաւս, արագ ընթացիւք», ԱԲ-ն՝ «վազելով»:

Արմ-ը շաւակի-ն համարում է գրչագրի սխալ, «որ պէտք է կարգալ արշաւակի» (տե՛ս Արմ, Արշաւ բառայօդուածը): Ստ. Մալխասեանը շաւակի-ն թարգմանել է «արշաւելով». «Իսկ ինքը Շապուհը ձի հեծած, արշաւելով անցնում էր կանանց միջով, եւ որոնք որ անքին դուր էին գալիս՝ մէկ-մէկ տանում էր իր մօտ պիղծ խառնակութեան...»:

Համատեքստը յուշում է, որ շաւակի-ի արշաւակի թարգմանութիւնը կամ այն արշաւել-ի հետ նոյնացնելը տրամաբանական էէ (Շապուհը, ձիով արշաւելով, չէր կարող ընտրել իրեն դուր եկած կանանց):

Շաւակի-ն սխալագրութիւն չպէտք է համարել: Միջ. պրս. šudan «գնալ»-ի բայահիմքն է šaw (Mackenzie, 79), իսկ այդ հիմքով իրանական լեզուներում կան մի շարք կազմութիւններ, այդ թւում՝ հայերէն փոխառութիւնների շարքում՝ ապաշաւ, արշաւ եւ այլն:

«Հեծեալ ի ձի շաւակի անցանէր-ը պէտք է թարգմանել «ձի հեծած գնում էր»:

Բուզանդի Պատմութեան մէջ հանդիպում են Իրանի ռազմական, վարչական, կրօնական բնագաւառներին վերաբերող մի շարք բառեր՝ անդերձապետ, մոզաց անդերձապետ, սակստան անդերձապետ, զինդակապետ... եւ այլն:

Այդ կարգի բառերը (ոչ միայն Բուզանդի գրքում վկայուածները) հայերէնի իրանական փոխառութիւններ ղիտելը եւ



535-2015

փոխառութիւնների ցանկում զետեղելը ճիշտ մտեցում է:

Դրանք օտար բառեր են, եւ Հայ ընթերցողի համար յաճախ բուն իմաստն աւորոշ է:

Այս հանգամանքը, թերեւս, գիտակցել է նաեւ Բուզանդը՝ մի շարք դէպքերում տուեալ բառի հետ գործածելով ընթերցողին (նկատի ունենք Ե. դարի) հասկանալի հոմանիշը: Օրինակ՝

Մազդեզագն-մոգուցն - «...դի եթող զօրէնս քրիստոնէութեան, եւ կալաւ զօրէնս մազդեզացն, այսինքն զմոգուցն. եւ պագ երկիր արեգական եւ կրակի...» (IV, ԻԳ): Օրէն(ք) այս համատեքստում նշանակում է «կրօն». Բուզանդը նկատի ունի զրադաշտական կրօնը:

Մոգ, Մազդեզն իրանական ծագում ունեցող բառեր են: Գրաբարում յաճախական է մոգ-ը: Այն առկայանում է նաեւ մի շարք բառերի կազմում. մոգակամ, մոգակրօն, մոգակրօնիկ, մոգեան, մոգեմ, մոգութիւն, մոգպաշտէ, մոգպետ): Նոյնը չենք կարող ասել Մազդեզն, օրէն մազդեզացի մասին: Այդ պատճառով էլ մազդեզացն Բուզանդը թարգմանում է մոգուցն: Նկատենք մի իրողութիւն եւս. մոգ-ը գրաբարում միայն իրանական կրօնին չէր վերաբերում: Ըստ ՆՀԲ-ի՝ «մարգարէ հեթանոսաց, սուտ գուշակ, հմայող, քաղզեայ, աստեղագէտ...»: Բուզանդը տեղեակ էր բառի բազմիմաստութեանը եւ որպէսզի շեշտեր

իրանական կրօնին վերաբերելը, այսինքն զմոգուցն-ից յետոյ յաւելում է «եպագ արեգական եւ կրակի», իսկ արեգակին եւ կրակին երկրպագելը բնորոշ է զրադաշտականներին:

Մոգ-ը հայերէնում կայ եւ մով ձեւով, նաեւ՝ մովպետ, մովամ աճորձապետ եւ այլն: Մոգ-ը փոխառութիւն է պարթեւերէնից, իսկ մով-ը՝ միջին պարսկերէնից:

Ոստիկան-վերակացու - «Եւ անդէն յերկիրն Հայոց ոստիկանս թողին եւ վերակացուս» (IV, ԾԷ): Ոստիկանը գրաբարում բազմիմաստ է (տե՛ս ՆՀԲ): Տուեալ համատեքստին յարիր իմաստի հասկանալիութեան համար հեղինակը յաւելում է վերակացու բառը: Հոմանշային այս դոյզը առկայ է նաեւ մէկ այլ օրինակում. «...վերակացուս եւ ոստիկանս յերկիրն Աղձնեաց թողուին» (V, ԺԶ): Ն. Աղոնցը նշում է, որ ոստիկանի իմաստը բացայայտում է վերակացու բառը⁸:

Ամփոփում: Բուզանդի Պատմութեան բառապաշարի քննութիւնից ակնյայտ է դառնում հեղինակի՝ պարսկերէնի իմացութիւնը: Իրանական լեզուների մի շարք բառեր առաջին անգամ վկայել է Բուզանդը: Հոմանիշների կողք կողքի գործածութիւնը, լեզուաճանաչական իւրայատկութիւնից զատ, նաեւ երկլեզուային, երբեմն՝ եռլեզուային բառարանի բառայօդուածների նմոյշ է:

8 Ն. Աղոնց, Հայաստանը Յուստինիանոսի դարաշրջանում, Երեւան, 1987, էջ 54: Ostigan (ostikan)-ը միջին պարսկերէնում ունի «Ռատարիմ, վատաբեյի» իմաստը (տե՛ս Mackenzi, 61), «Ռիմ Ռայոց մօտ Ռատարիմ էիմ կոչումը թագաւորի մօտիկ բարձրագոյն պաշտօնեաները» (տե՛ս Արմ, Ոստիկան բառայօդուածը):

ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԷՆԻ ԲԱՌԱՐԱՆԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

Սոհամմադ Սալէք Սոհամմադի

Հ. Մ. Ամալեանը Հայ բառարանագրութեան պատմութիւնը բաժանել է 3 հիմնական շրջանների¹. Միջնադարեան շրջան (սկզբից մինչեւ ժէ. դարի 2-րդ քառորդ՝ Ռիփոլայի բառարանի երեւան գաւը)², 2. Նոր շրջան կամ նախասովետական շրջան (ժէ. դարի 2-րդ քառորդից մինչեւ մեր դարի 20-ական թուականները) եւ 3. Հայ բառարանագրութեան սովետական շրջան:

Հայ նոր բառարանագրութեան շրջանում ստեղծւում են Հայ բանասիրութեան գլուխգործոցներ՝ Նոր Հայկագեան, Արմատական ու Մալխասեանցի բառարանները:

Ժէ.-ի. դարերի Հայ բառարանագրութիւնը հարուստ պատմութիւն ունի: Բացի մատենակից բառարաններից, երկրագնդի 45 Հայագիտական եւ Հայաշատ բնակավայրերում 280-ից աւելի Հայագէտներ հրատարակել են 320 բառարան³: Կ. Պոլիսը մեծ աւանդ է ունեցել Հայ բառարանագրութեան ասպարէզում: Հայերէն առաջին տպագիր բառարանը՝ Dictionarium Armeno-Latinum-ը, կազմուել է Ֆ. Ռիփոլայի կողմից եւ հրատարակուել է 1621 թ. Միլանում, իսկ 1633 թ. վերահրատարակուել Փարիզում:

Ժէ. դարի Երեմիա Մեղրեցու «Բառգիրք Հայոց»⁴ աշխատութիւնը, որը հրատարակուել է 1698 թ. Ալիկոննիայում (Իտալիա), ապա Կոստանդնուպոլսում, Հայ բառարանագրութեան սկզբնաղբիւր հանդիսացող էլ առաջին տպագիր Հայերէն բացատրական բառարանն է, որը զգալի դեր է խաղացել Հայ բառարանագրութեան բնագաւառում: Այս բառարանից օգտուել են միջին Հայերէնի բառապաշարին նուիրուած բառարանների հեղինակները, ինչպէս, օրինակ, Նորայր Բիւզանդացին, Հր. Աճառեանը, Գ. Զահուկեանը⁵:

1749 թ. հրատարակուել է Հայ բառարանագրութեան Հայր՝ Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան հիմնադիր Մխիթար Սեբաստացու «Բառգիրք Հայկագեան լեզուի» բառարանի առաջին հատորը՝ նոր գիտական մօտեցումներով:

Ինչ վերաբերում է միջին Հայերէնի (ԺԲ.-ԺԶ. դդ.) բազմոլորտ թարգմանական եւ հեղինակային մատենագրութեան բառապաշարին նուիրուած բառարաններին, ապա պէտք է նշել, որ միջին Հայերէնի բառապաշարի զգալի մասն առ այսօր անտիպ մատենագրութեան եւ միջին Հայերէնի չհրատարակուած բառարանների պատճառով դուրս է մնացել բանասիրական եւ ստուգաբանական ուսումնասիրութիւնների տեսագաւառից:

1 Հ. Մ. Ամալեան, Միջնադարեան Հայաստանի բառարանագրական յուշարձանները (V-XV դդ.), Երեւան, 1966:
2 Միւնչեւ ԺԷ. դար հայ բառարանագրութիւնը սահմանափակում էր փոքրածաւալ բառացանկերով եւ բառարաններով, որոնք բառարանի եւ ժամանակաշրջանի պահանջները:
3 Ս. Անթոյեան, Գ. Գասպարեան, Հայ բառարանագրութեան պատմութիւն, Երեւան, 1968 /Գրախօսութիւն/, - ՊԲՀ, 1989, էջ 267:

4 Երեմիա Մեղրեցի, Բառգիրք հայոց, Ա տպ., Ալիկոննա, 1698, Բ տպ., 1729:
5 Այս կապակցութեամբ մանրամասն տե՛ս՝ Ռ. Ղազարեան, Լեզուաբանական ուսումնասիրութիւններ, Երեւան, 2010. Ն. Ակիմեան, Հայերէն արմատական բառարան, - «Հանդէս ամսօրեայ», 1930, էջ 491. Հ. Մ. Ամալեան, Գ2. աշխ: